



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Վարկ 3284-ARM (ԱԶԲ) «Մեյամիկ անվտանգության բարելավման ծրագիր»
ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂ

մարտի 17, 2020թ.

Վարկի համարը՝ 3284-ARM (ԱԶԲ) «Մեյամիկ անվտանգության բարելավման ծրագիր»

Առաջադրանքի անվանումը՝ Փորձաքննող ինժեներ (խորհրդատու)

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ AIC-09

Վերջնաժամկետ 2020թ. մարտի 31-ը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետև՝ «Կառավարություն») ստացել է վարկ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) «Մեյամիկ անվտանգության բարելավման ծրագիրը» (Ծրագիր) իրականացնելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶ) Ծրագրի իրականացնող գործակալությունն է և մտադիր է այդ վարկային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Յուրաքանչյուր ենթածրագրի համար ՀՏԶ-ն նշանակում է ենթածրագրի պատասխանատու ինժեներ (ՊԻ), որը կընդգրկվի ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ՄԱԲ Ծրագում՝ ենթածրագրի նախապատրաստման, և շինարարական աշխատանքների վերահսկման նպատակով:

Անհատ խորհրդատուի աշխատանքային պարտականությունները ներառում են.

1. Ենթածրագրի պատասխանատու ինժեները տեղեկացնում է դպրոցական / համայնքային ներկայացուցիչներին իր այցելության օրվա/ժամանակի մասին:
2. Ծրագրի տեղանք այցելելիս ինժեները՝ մանրամասնորեն ուսումնասիրում է կառուցմանը / ուժեղացմանը ենթակա շենքը և աշխատանքային տեղանքը: ՊԻ-ն հավաքում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որոնք վերաբերում են շրջակա միջավայրին, սոցիալական և տեխնիկական գնահատումներին, նաև՝ այլ բնույթի տեղեկատվություն, որը պետք է ընդգրկվի նախագծային ընկերությանը տրվող տեխնիկական առաջադրանքի մեջ: Հստակեցնում է աշխատանքների շրջանակները և ծավալը, առաջարկ է ներկայացնում իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ: Ճշտում է դպրոցի ներկա և ակնկալվող հզորությունը:
3. Տեղանք այցելելուց հետո պատասխանատու ինժեները պատրաստում է ենթածրագրի իրականացման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:
4. Նախագծային կազմակերպության հետ համատեղ պատրաստում է յուրաքանչյուր ենթածրագրի նախագծային առաջադրանքը:
5. Նախագծման ընթացքում վերահսկում է նախագծային աշխատանքների ընթացքը, ըստ փուլերի:
6. Իրեն տրված հանձնարարության հիման վրա, Պատասխանատու ինժեները ստուգում է նախագծի համապատասխանությունը նախագծային առաջադրանքին, հիմնական տեխնիկական լուծումների համապատասխանությունն առկա նորմերին և ՄԱԲԾ-ի պահանջներին, ներկայացված նախագծի ամբողջականությունը: Նաև՝ այն դեպքում, երբ նախագիծը ներկայացվել է անկախ փորձաքննության, նա ստուգում է փորձաքննության մեկնաբանությունների և առաջարկությունների արտացոլումը նախագծում:
7. Շինարարության ընթացքում Պատասխանատու ինժեները այցելում է ենթածրագրի տեղանք առնվազն ամիսը երկու անգամ: Այցելությունների ընթացքում, անհրաժեշտության դեպքում նա հանդիպում է դպրոցի և համայնքի ղեկավարության և համայնքի բնակիչների հետ՝ ծրագրի իրականացման հետ առնչվող հարցերի քննարկման նպատակով:
8. Տեղանքում ինժեներն առաջին հերթին ուսումնասիրում է շինարարության վարման մատյանում նախորդ այցելություններից հետո արված գրառումները: Նա կարող է այդ պահին կատարված աշխատանքների ցանկից պատահականորեն ընտրել որոշակի աշխատանքների հատվածներ և տեղում ստուգել աշխատանքները՝ պարզելու համար, թե. (1) արդյոք աշխատանքներն իրականացվել են ըստ գործող նախագծի պայմանների, (2) արդյոք տեխնիկական վերահսկողի և կապալառուի կողմից արձանագրված առաջընթացը համապատասխանում է իրականությանը, (3) արդյոք իրականացված աշխատանքները համապատասխանում են կապալառուի և տեխնիկական հսկիչի կողմից ներկայացված ծավալներին: Եթե որևէ անճշտություն հայտնաբերվի, ՊԻ-ն գրանցում է դա տեխնիկական հսկիչի և նախագծողի մատյաններում և գրավոր ներկայացնում բաժնի պետին: Եթե այդ անհամապատասխանությունը զգալի է, ապա Պատասխանատու ինժեները կարող է լրացուցիչ հետաքննել կամ կարգադրել դադարեցնել

աշխատանքները: Նա պատասխանատու է այս հարցն անմիջապես բաժնի պետի ուշադրությանը ներկայացնելու համար:

9. Ինժեների տեղանք այցելության ընթացքում կապալառուն պարտավոր է նրա հաստատմանը և ստորագրությանը ներկայացնել կատարողական ակտը՝ մշակված տեխնիկական հսկիչի հետ համագործակցությամբ: Տեխնիկական հսկիչը պետք է ստորագրի ակտը: Եթե ինժեները բավարարված է բոլոր ավարտված աշխատանքներով, և տեխնիկական հսկողության մատյանում գրանցված տեղեկատվությունը համապատասխանում է փաստացի կատարված աշխատանքներին, ապա Պատասխանատու ինժեները ստորագրում է կատարողական ակտը:
10. Շինարարության ավարտից հետո Պատասխանատու ինժեները մասնակցում է հանձնող-ընդունող հանձնաժողովի աշխատանքներին և վավերացնում է ավարտական ակտը:
11. Իրականացնում է Ծրագրի փորձաքննության և իրականացման բաժնի պետի, Փորձաքննության և վերլուծման խմբի ղեկավարի հանձնարարությամբ այլ գործառնություններ:

Կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրի գործունեության ժամկետը կսահմանվի 1 տարի՝ երկարաձգման հնարավորությամբ:

Խորհրդատուների կարճ ցուցակի կազմման չափանիշներն են՝

- *Շինարար-ճարտարագետի բարձրագույն կրթություն,*
- *Նախագծման և շինարարության վերահսկման բնագավառում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ,*
- *Համակարգչային գիտելիքներ (MS OFFICE),*
- *Անզլերենի իմացությունը ցանկալի է:*

Հետաքրքրված խորհրդատուն պետք է ներկայացնի տվյալներ իր կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ (CV): Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Ասիական Չարգացման Բանկի «Խորհրդատուների օգտագործման ուղեցույցում» (մարտ, 2013թ., որը պարբերաբար լրամշակվում է) սահմանված «Անհատ Խորհրդատուի ընտրության» ընթացակարգին համաձայն:

Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏՁՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:

Ինքնակենսագրականները պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ procurement@atdf.am և atdf@atdf.am հասցեներով, ոչ ուշ քան **2020թ. մարտի 31-ը, ժամը 17:00:** Միայն կարճ ցուցակում ընդգրկված անձիք կհրավիրվեն հարցազրույցի:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏՁՀ գրասենյակ,
Գնումների բաժին
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60: